



RBI

**ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

Կապարող՝ Տեսչական բարեփոխումների քարտուղարություն

Երևան 2011



Բովանդակություն

Ներածություն	3
Ռիսկի սահմանում	4
Ռիսկի գնահատում	5
Ոլորտային.....	5
Անհատական.....	6
Տնտեսավարողների դասակարգումն ըստ ռիսկայնության.....	7
Ռիսկի միավոր	7
Ռիսկի բազային գիծ.....	9
Տվյալների բազա.....	11
Սահմանում.....	11
Տվյալների բազայի կառուցվածքը.....	11
Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման համար անհրաժեշտ գործողություններ և քայլեր	13



Ներածություն

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ընդունված 2011 թվականի հունիսի 23-ին, և ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1135 որոշմամբ հաստատված Հայաստանում տեսչական բարեփոխումների հայեցակարգի՝ ՀՀ-ում ստուգում իրականացնող բոլոր պետական մարմինների կողմից նախատեսվում է ստուգումների իրականացման նպատակով մշակել և ՀՀ կառավարության կողմից հաստատել իրենց վերաբերող ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգերի մեթոդաբանություններ:

Ռիսկայնության գնահատման մեթոդաբանությունը և ռիսկայնության չափանիշները հնարավորություն կտան տեսչություններին՝

- վերանայել, վերլուծել և դասակարգել վերահսկման օբյեկտները՝ ըստ դրանց ռիսկայնության գործոնների,
- ձևավորել տվյալների բազա՝ ըստ գործունեության ոլորտների և տնտեսավարող սուբյեկտների
- ներդնել ստուգումների նպատակադրման արդյունավետ մեխանիզմներ:
- ռիսկերի կառավարման նպատակով արդյունավետ բաշխել առկա ռեսուրսները:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը հնարավորություն է տալիս հետևելու ռիսկերին՝ ըստ ոլորտների ու տնտեսավարող սուբյեկտների, և ստուգումները նպատակադրում է դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են:



Ռիսկի սահմանում

Քանի որ ստուգում իրականացնող մարմինների վերահսկման ոլորտները խիստ տարբերվում են, ապա յուրաքանչյուր ստուգում իրականացնող մարմին ռիսկի սահմանումը տալիս է իր վերահսկման ոլորտին համապատասխան:

Առհասարակ ռիսկի սահմանումը տրվում է որպես անցանկալի իրադարձության հայտ գալու հավանականության և դրանից ակնկալվող բացասական հետևանքների համադրություն:

Ռիսկ = անցանկալի իրադարձության հավանականություն x ակնկալվող բացասական հետևանքներ

Կարևոր է հասկանալ, որ ցածր հավանականությունը կարող է չնշանակել ցածր ռիսկ, եթե հետևանքը մեծ է: Նույն կերպ՝ բարձր հավանականություններն անհրաժեշտաբար չեն ենթադրում բարձր ռիսկ:



Ռիսկի գնահատում

Ռիսկի գնահատումը ռիսկերի կառավարման գործընթացի մաս է կազմում: Ռիսկի գնահատումը կոնկրետ իրավիճակի և ճանաչված վտանգի հետ կապված անցանկալի պայմանների առաջացման հավանականության քանակական և որակական արժեքի որոշումն է:

Ռիսկերի գնահատման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝

- Գործող նորմալ պայմանների վատթարացման հավանականությունը
- Ցանկացած վտանգի տարածումը և այդ տարածման հավանականությունը
- Յուրաքանչյուր վտանգի հնարավոր բացասական արդյունքները

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանության մշակման ընթացքում կարևոր է հաշվի առնել այլ երկրների համապատասխան մարմինների փորձը:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը ենթադրում է ստուգում իրականացնող մարմինների կողմից ստուգման ենթակա բոլոր տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնության գնահատում և նրանց վերահսկողության հաճախականության բաշխում ըստ տվյալ սուբյեկտների ռիսկայնության աստիճանի:

Վերահսկման օբյեկտների ռիսկայնությունը հաշվարկվում է առնվազն **ոլորտային և անհատական** ռիսկայնության գնահատականների հիման վրա:

Գործունեության ոլորտի ռիսկը ցուցանիշ է, որը հաշվարկելիս հիմք է ընդունվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի կարևորությունն ու վրանգավորությունը՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 2.1**

Հարկ է նշել, որ **ոլորտային ռիսկը** ստուգում իրականացնող յուրաքանչյուր մարմնի համար ունի հաշվարկման յուրահատուկ սկզբունքներ, այն ոչ միշտ է հաշվարկվում տնտեսավարողի տնտեսական գործունեության ոլորտը նկարագրող չափանիշներով: Ոլորտային ռիսկի հաշվարկման ընթացքում օգտագործվում են չափանիշներ, որոնք չեն փոփոխվում տնտեսավարողի կողմից օրենսդրական պահանջների ու նորմերի պահպանման արդյունքներից: Օրինակ՝ Աշխատանքի պետական տեսչության համար տնտեսավարողի ոլորտային ռիսկը հաշվարկվելիս որպես ռիսկի չափանիշ է օգտագործվում տվյալ տնտեսավարողի մոտ աշխատողների քանակը, սակայն այդ չափանիշը չի նկարագրում նրա վարած տնտեսական գործունեության ոլորտը, ինչպես



Նաև չի փոփոխվում օրենսդրական նորմերին և պահանջների պահպանման կամ խախտման արդյունքում:

Անհատական է կոչվում այն ռիսկայնությունը, որը գնահատում է տնտեսավարողի վարած գործունեությունը:

Անհատական ռիսկը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների պարբերականությունը, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշներ:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 2.1**

Անհատական ռիսկայնությունը գնահատվում է ստուգաթերթերով: Ստուգաթերթերը մշակվում են ստուգում իրականացնող մարմինների կողմից գործող օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան և իրենցից ներկայացնում են հարցերի ցանկ, որոնք ենթակա են պարզաբանման ստուգման ընթացքում: Ստուգաթերթի հարցաշարում ընդգրկված յուրաքանչյուր վերահսկողական բնույթ կրող հարց իր առջև ունի նաև ռիսկայնության միավոր, որն ավելանում է տվյալ տնտեսավարողի ռիսկայնության միավորին այդ հարցով ֆիքսված պահանջը խախտելու դեպքում:



Տնտեսավարողների դասակարգումն ըստ ռիսկայնության

Ռիսկի միավոր

Ընդհանուր ռիսկի միավորը հաշվարկվում է որպես ոլորտային և անհատական ռիսկայնության գնահատումից ստացված միավորների գումար:

Իրենց հերթին ոլորտային և անհատական ռիսկայնության միավորները հաշվարկվում են հետևյալ կերպ՝

Ոլորտային ռիսկայնության միավորի հաշվարկում

Տնտեսավարողի ռիսկայնությունը հաշվարկվում է համաձայն նախօրոք մշակված գնահատման համակարգի, որը թույլ է տալիս կախված տնտեսավարողի գործունեության տեսակից կամ այլ անփոփոխ գործոններից գնահատել նրա պասիվ ռիսկայնությունը:

Ոլորտային ռիսկի հաշվարկման տրամաբանությունը կախված ստուգում իրականացնող մարմնի յուրահատկություններից կարող է տարբերվել:

Օրինակ, Պետական հրդեհախն տեսչությունը չափանիշների հիման վրա գնահատում է ընտրանքային սկզբունքով տարբեր տեսակի մի թիվ կազմակերպություններ և իր գնահատման արդյունքները տարածում բոլոր տեսակի կազմակերպությունների վրա:

Մինչ դեռ Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը համաձայն իր մեթոդաբանության՝ ոլորտային ռիսկ է դիտարկում տնտեսավարողի վարած գործունեության տեսակը համաձայն Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ, խմբ. 2): Այսինքն, տեսչության վերահսկման ոլորտում գտնվող յուրաքանչյուր գործունեության տեսակ նախօրոք մշակված հարցերի հիման վրա գնահատվում է հատուկ այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից, որից հետո իմանալով իր վերահսկողության դաշտում գտնվող բոլոր տնտեսավարողների վարած գործունեության տեսակները տեսչությունը հնարավորություն է ձեռք բերում գնահատել տվյալ տնտեսավարողի ոլորտային ռիսկը:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ դրանց հաշվարկման և գնահատման կարգը հաստատվում է ստուգում իրականացնող պետական մարմինը:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 2.1**

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, թե որն է ռիսկային աստիճանը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և որն է դրանց հաշվարկման և գնահատման կարգը



Պետական հրդեհային տեսչության համար, սակայն, ելնելով ստուգող մարմնի յուրահատկություններից, դրանք կարող են տարբերվել ներկայացված օրինակից:

Կարող են լինել դեպքեր, երբ հնարավոր չլինի պատկերավոր տարանջատել ռիսկային աստիճանը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը ու դրանց հաշվարկման և գնահատման կարգը, սակայն տրամաբանորեն դրանց միջև այնուամենայնիվ առկա է տարանջատում: Այն դեպքերում, երբ հնարավոր չի դրանք տարանջատել, նախընտրելի է, որ և ռիսկային աստիճանը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, և դրանց հաշվարկման և գնահատման կարգը ներառված լինեն ՀՀ կառավարության կողմից հաստատվող փաստաթղթի մեջ:

Այսպես օրինակ, Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մեթոդաբանության մեջ նախնական ոլորտային ռիսկայնությունը գնահատելիս ռիսկային չափանիշները օգտագործվում են հարցերի տեսքով, իսկ դրանց հաշվարկումն ու գնահատումը իրականացնում է հատուկ աշխատանքային խումբը:

Ռիսկային աստիճանը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիր		Դրանց հաշվարկման և գնահատման կարգը					
Գնահատման սկզբունքը	Չափանիշներ	Բալեր					
		1	2	3	4	5	8
Շինության նկարագրությունը	Հարկայնություն (հարկերի քանակ)	1-ից 2	3-ից 6	7-ից 9		>10	
	Ջրոյական նիշից ցածր գտնվող հարկերի քանակը	1		1-ից 2		>2	
	Ծխագոյացման, կրակի տարածման նյութեր					Առկա է	
	Մարդկանց միաժամանակյա առկայություն տարածքում	<15	15-ից 50	50-ից 300		>300	
	Շինության տարիք	մինչև 10տ	10-ից 20տ	20-ից ավելի			
	Մարդկանց առկայությունը տարածքում օրվա կտրվածքով (ժ)	<8		8-ից 16		16-ից 24	
	Մարդկանց տարածքին ծանոթ լինելը				Ծանոթ չեն		
	Տարահանման ելքեր						Խոչընդոտվում են

Աղյուսակ 1. Ռիսկի գնահատման չափանիշների օրինակ

Անհատական ռիսկայնության միավորի հաշվարկում

Յուրաքանչյուր օբյեկտի անհատական ռիսկայնությունը հաշվարկելու համար հարկավոր է օգտագործել ստուգաթերթերից ստացված պատասխանները:



Հարցեր	Այո	Ոչ	Զ/ս	Կշիռ
Մուտքի մոտ առկա է հարմարանք կոշիկները կեղտից մաքրելու համար			✓	2
Մաքրման գույքը (դույլեր, թասեր, խոզանակներ, լաթեր և այլն) մակնշված են		✓		4
Սպորտային և առողջարարական լողավազաններում առկա է բժշկի աշխատասենյակ	✓			2
Ավազանի ջուրը վարակազերծում է		✓		6
Ընդհանուր				10

Աղյուսակ 2. Ստուգաթերթի միջոցով նհատական ռիսկի գնահատման օրինակ

Այսպիսով, յուրաքանչյուր ստուգումից հետո գնահատվում է տնտեսավարողի անհատական ռիսկայնությունը, որին գումարելով ոլորտային ռիսկայնության միավորը՝ ստանում ենք տնտեսավարողի ընդհանուր ռիսկի միավորը, որի հիման վրա էլ որոշվում է թե ինչ աստիճանի վերահսկողության պետք է ենթարկվի տվյալ տնտեսավարողը:

Ռիսկի բազային գիծ

Յուրաքանչյուր տնտեսավարողի ստուգումների հաճախականությունը որոշվում է ելնելով տվյալ տնտեսավարողի ռիսկի ընդհանուր միավորից, որը հանդիսանում է ոլորտային և անհատական ռիսկայնության միավորների գումարը:

Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում՝
 ա. բարձր ռիսկայնության,
 բ. միջին ռիսկայնության,
 գ. ցածր ռիսկայնության:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 2.1

Ռիսկայնության խումբ	Միավոր
ԲԱՐՁՐ	71 և ավել միավորներ հավաքած տնտեսավարողներ
ՄԻՋԻՆ	46-70 միավոր հավաքած տնտեսավարողներ
ՑԱԾՐ	45-ից ցածր միավոր հավաքած տնտեսավարողներ



Աղյուսակ 3. Ռիսկայնության խմբերի օրինակ

Աղյուսակ 3-ում ներկայացված միավորները պայմանական են և ներկայացված են միայն բազային գծի օրինակը ավելի պատկերավոր սարքելու համար: Միավորների միջակայքը պետք է վերջնական սահմանվի միայն մեթոդաբանության ընդունումից հետո՝ փորձարկումների արդյունքում:

Ստուգում իրականացնող մարմինը բարձր ռիսկայնության խմբում ընդգրկում է իր կողմից ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև քսան տոկոսը՝ ըստ ռիսկայնության աստիճանի նվազման:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 2.1**

Սահմանը, որը տարանջատում է մի ռիսկային խումբը մյուսից կոչվում է բազային գիծ: Բազային գծերը տեսչությունների մոտ կարող են տարբերվել իրարից և յուրաքանչյուր տեսչության համար որոշվում են համաձայն իրենց մեթոդաբանության յուրահատկությունների, սակայն կարևոր է հիշել, որ բարձր ռիսկայնության խմբում չեն կարող ընդգրկվել ստուգման ենթակա տնտեսավարողների 20%-ից ավելին:

Ստուգումների հաճախականությունը որոշվում է ըստ ռիսկայնության խմբերի.

- 1) բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարողների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ.
- 2) միջին ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարողների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ.
- 3) ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարողների մոտ՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:

Հարկ է նշել, որ բարձր ռիսկի խմբին պատկանող տնտեսավարողը ցուցանիշների փոփոխման կամ ստուգման արդյունքների հիման վրա կարող է տեղափոխվել ավելի ցածր ռիսկի խումբ: Միևնույն ժամանակ նախնականում միջին կամ ցածր ռիսկ ունեցող խմբին պատկանող տնտեսավարողը կարող է տեղափոխվել ավելի բարձր ռիսկային խումբ (միջինից բարձր կամ ցածրից միջին և նույնիսկ բարձր), եթե ստուգման արդյունքում բացահայտվեն խախտումներ կամ փոփոխվեն ոլորտային ռիսկի հաշվարկման հիմքում ընկած տվյալ տնտեսավարողի ցուցանիշները:



Տվյալների բազա

Սահմանում

Հարկ է նշել, որ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի շրջանակներում տվյալների բազան իրենից ենթադրում է ծրագրային ապահովման համակարգ:

Ստուգում իրականացնող մարմինը վարում է տվյալների բազա, որը ներառում է տեղեկատվություն իր վերահսկման ոլորտում գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 2.1**

Տվյալների բազան նախատեսված է ապահովել ռիսկերի կառավարման համակարգը և բացի ռեգիստրի պասիվ գործառույթից կատարում է նաև վերահսկողության վերլուծական կարևոր գործառույթներ:

Կախված ստուգում իրականացնող մարմնի առանձնահատկություններից տվյալների բազան կարող է բաղկացած լինել մի քանի ծրագրերից, որոնք կգործեն որպես մեկ բարդ ծրագիր: Տվյալների բազաները բաղկացած են ծրագրային ապահովման վրա հիմնված «բաղադրիչներից», որոնք կառուցված են տեղեկություններ հավաքելու և պահելու համար, այնպես, որ օգտագործողը կարողանա որոնել, ավելացնել, թարմացնել կամ հեռացնել /ջնջել/ այդ տեղեկությունները: Տվյալների բազայի կառուցվածքը աղյուսակային է, բաղկացած է տեղեկատվական տողերից և սյունակներից: Ավելի պարզ՝ տվյալների բազան սահմանվում է որպես էլեկտրոնային ֆայլինգի համակարգ: Տվյալների բազաները դասավորված են ըստ դաշտերի, գրառումների և ֆայլերի: Դաշտը տեղեկության մեկ կտոր է, գրառումը՝ դաշտերի ամբողջական համալիր, ֆայլը՝ գրառումների հավաքածո:

Ստուգում իրականացնող մարմինները կախված իրենց առանձնահատկություններից բացի տվյալների բազայի ձևավորելուց նաև կարող է վարել ռեգիստրներ (վիճակագրական բազաներ և այլն):

Տվյալների բազայի կառուցվածքը

Ստուգում իրականացնող յուրաքանչյուր մարմին առանձնահատկություններից ու նպատակներից ելնելով՝ անհրաժեշտ է ստեղծել ստուգում իրականացնող մարմնի կողմից վերահսկվող բոլոր սուբյեկտների գրանցամատյան /ռեգիստր/: Ռեգիստրում խորհուրդ է տրվում գրանցել հետևյալ տվյալները.



1. ստուգում իրականացնող մարմնի ռեգիստրում տնտեսավարող սուբյեկտի գրանցման համարը,
2. տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ՝ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումն ու կազմակերպա-իրավական ձևը),
3. անհատ ձեռնարկատիրոջ անունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված և այլն),
4. պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը,
5. պետական գրանցման վկայականի սերիան և համարը,
6. իրավաբանական անձ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի,
7. պետական ռեգիստրի կողմը,
8. տնտեսավարող սուբյեկտի պետական գրանցման հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը,
9. տնտեսավարող սուբյեկտի գործունեության վայրի հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոսի համար և կապի այլ միջոցներ),
10. տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն) այդ թվում՝ հեռախոսը և կապի այլ միջոցներ,
11. տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները,
12. տնտեսավարող սուբյեկտների և նրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները /հեռախոսի համար և կապի այլ միջոցներ/,
13. լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու դեպքում տեղեկություններ լիցենզիայի մասին,
14. տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունը սկսելու ամսաթիվը,
15. տնտեսավարող սուբյեկտների օբյեկտների կառուցման/վերջին վերակառուցման ամսաթիվը,
16. տնտեսավարող սուբյեկտի աշխատակիցների քանակը:

Հարկավոր է նշել, որ վերոնշյալ տվյալների ցուցակը ամբողջական և համատարած չէ, և յուրաքանչյուր ստուգում իրականացնող մարմին կարող է համապատասխանացնել ելակետային տվյալները իր վերահսկման ոլորտին:

Տվյալների շտեմարանները կարող են ստեղծվել աղյուսակների տեսքով, որտեղ պետք է գրանցվեն բազմաթիվ տվյալներ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ:



Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման համար անհրաժեշտ գործողություններ և քայլեր

Քանի որ նոր ստուգումների համակարգի ներդրումը բարդ և ստուգում իրականացնող մարմիններից ու այլ պետական մարմիններից համագործակցություն պահանջող գործընթաց է, ապա ակնհայտ է, որ նման նախագիծը հաջողությամբ ներդնելու համար հարկավոր է դեռ մեթոդաբանության մշակման փուլում մանրամասն գծել այն ուղին, որով պետք է շարժվի տեսչությունը համակարգը հաջող ներդնելու համար:

Այդ իսկ պատճառով մեթոդաբանությունը մշակելու ընթացքում խորհուրդ է տրվում պարզ նշել այն մարտահրավերները, որոնք պետք է հազթահարեն համակարգը ներդնելու համար.

- Տեսչությունը,
- ՀՀ Կառավարությունը,
- այլ պետական մարմինները:

Յուրաքանչյուր ստուգում իրականացնող մարմին ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանությունը մշակելուց հետո պետք է ներդնի այն պարտադիր կարգով համագործակցելով գործարար միջավայրի հետ հետևյալ փուլերով.

1. Նախնական մշակումից հետո կազմակերպել քննարկումներ գործարար միջավայրի հետ
2. Քննարկումից հետո փորձարկել համակարգը որևէ պիլոտային համայնքում
3. Փորձարկումից հետո նորից կազմակերպել քննարկումներ գործարար միջավայրի հետ և այդ հանդիպումների արդյունքում լրամշակել մեթոդաբանությունը և կատարել համապատասխան փոփոխություններ,
4. Լրամշակումից հետո ևս կատարել մի քանի փորձնական ստուգումներ պիլոտային համայնքում
5. Վերջնական ամփոփել այն և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը